Համագործակցությունը քաղաքացիական հասարակության, հանրային մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ

Կանխարգելման ազգային մեխանիզմի մանդատի արդյունավետ իրականացման տեսանկյունից առանցքային է Մարդու իրավունքների պաշտպանի համագործակցությունը քաղաքացիական հասարակության, հանրային մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ:

Քաղաքացիական հասարակության հետ համագործակցության կարևոր ձևաչափերից է Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր խոշտանգումների կանխարգելման խորհրդատվական խորհուրդը: Խորհրդի նպատակն է խորհրդատվական աջակցություն տրամադրել Պաշտպանին՝ կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակով պայմանավորված լիազորությունների իրականացման ընթացքում: Այն աջակցում է ազատությունից զրկված անձանց իրավունքների ապահովմանն առնչվող խնդիրների վերհանմանը, ինչպես նաև իրավասու մարմիններին և կազմակերպություններին դրանց լուծմանն ուղղված առաջարկների ներկայացմանը:

Վատ վերաբերմունքի տարբեր դրսևորումների կանխարգելման ոլորտում քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունից զատ կարևորվում է նաև Պաշտպանի համագործակցությունը հանրային մարմինների հետ: Նշվածը հատկապես կարևոր է մշտադիտարկման ընթացքում վեր հանված խնդիրների արդյունավետ և օպերատիվ լուծման տեսանկյունից:

Կանխարգելման ազգային մեխանիզմի աշխատանքը ենթադրում է նաև մշտական ակտիվ համագործակցություն տարբեր երկրների կանխարգելման ազգային մեխանիզմների, մարդու իրավունքների ազգային հաստատությունների, ոլորտի միջազգային կառույցների ու կազմակերպությունների և այլ գործընկերների հետ: